Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսագումարները վերադարձվում են եթե՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարան ձեռք բերելու դեպքում:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելու դեպքում:
3. 2018 թ հունվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելուն,բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելուն, կամ անհատական բնակելի տուն կառուցելուն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով:
4. 2018 թ հունվարի 1-ից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու գործարքի պայմանագրային արժեքը չի գերազանցում 55 միլիոն դրամը՝ սույն կետը չի գործում ֆիզիկական անձի կողմից կառուցապատվող անշարժ գույքի արժեքի վերաբերյալ (պայմանագրային գումարի սահմանափակում չի գործում):
5. 2018 թ հունվարի 1-ից հիփոթեքային վարկի վարկառուին և առկայության դեպքում համավարկառուներին վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար չի կարող գերազանցել 1.5 միլիոն դրամը:
6. 2018 թ հունվարի 1-ից հետո վարկառու և համավարկառու վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձիք իրենց ընտրությամբ կարող են օգտվել միայն մեկ հիփոթեքային վարկի պայմանագրի մասով:
7. Հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձիք միայն այն դեպքում, եթե եռամսյակի ընթացքում ամբողջությամբ կատարել են հարկային մարմնի ներկայացված՝ եկամտային հարկի պարզեցված հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը:
8. Վարձու աշխատող ֆիզիկական անձին վերադարձվող գումարի առավելագույն չափը որոշելիս հարկային տարվա եռամսյակները դիտարկվում են առանձին-առանձին:
9. Եթե վարձու աշխատող ֆիզիկական անձին գումարները վերադարձնելուց հետո հարկային մարմին է ներկայացվում եկամտային հարկի ճշտված (պարզեցված) հաշվարկ, ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման հիման վրա փոխվում է հարկային մարմին ներկայացված հաշվարկով տվյալ վարձու աշխատող հանդիսացողվարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը, որի արդյունքում՝ Նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունը նվազում է վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին վերադարձված եկամտային

հարկի գումարից,ապա փաստացի վերադարձված եկամտային հարկի գումարի և եկամտային հարկի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով եկամտային հարկի վերադարձման օրվա դրությամբ հարկային գործակալին կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին առաջադրվում է եկամտային հարկի գծով պարտավորություն:
Համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից՝ տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով, կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի (պարզեցված) հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունն ավելանում է, ապա կատարվում է վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին, սույն հոդվածի համաձայն , եկամտային հարկի վերադարձվող գումարի վերահաշվարկ:

10. Սույն հոդվածով սահմանված՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը: